ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅԱՆ

ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

«ՀԱՅՓՈՍՏ»

ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

և

«Գյումրու «Ընատնիք» ՄՊՍԿ» ՊՈԱԿ-ի

Կնքված

15 հունվարի 2018 թ.

Սարյան 22, Հայփոստ

Երևան

Հայաստանի Հանրապետություն

Փաստաթղթի տեսակը	Համարը	Տարին
SUB	SB-N-135-01-18	2018

«ՀԱՅՓՈՍՏ» Փակ բաժնետիրական ընկերության «Հայփոստ հյուսիս» մասնաճյուղը (այսուհետ՝ «Ընկերություն»), ի դեմս մասնաճյուղի տնօրեն Բաջայր Նիկոդոսյանի, որը գործում է «ՀԱՅՓՈՍՏ» ՓԲԸ-ի Գլխավոր գործադիր տնօրենի պաշտոնակատարի կողմից 2013թ. դեկտեմբերի 03-ին տրված թիվ 1762-Ա հրամանի հիման վրա, և «Գյումրու «Ընտանիք» ՄՊՍԿ» ՊՈԱԿ-ը, ի դեմս տնօրեն Ա.Մինասյանի (այսուհետ «Հաճախորդ»), կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

1. Պայմանագրի առարկան

1.1 Սույ նպայմանագրով Ընկերությունը պարտավորվում է Հաճախորդին մատուցել բաժանորդագրության ծառայություն, որի շրջանակներում Հաճախորդը հնարավորություն է ստանում Ընկերության բաժանորդագրության կատալոգից ընտրել թերթեր, ամսագրեր կամ այլ տպագիր մամուլ (այսուհետ՝ Թերթեր), որոնք ցանկանում է որոշակի ժամանակահատվածում գնել թողարկողներից (Թերթերը վաճառողներից) և ստանալ դրանքիր նշած վայրում:

1.2 Հաճախորդի կողմից պատվիրված թերթերը (Բաժանորդագրության դիմումում լրացված թերթերը) հանդիսանում են դրանք թողարկողների կամ վաճառողների սեփականությունն այնքան ժամանակ, քանի դեռ չեն հանձնվել Ընկերությանը՝ Հաճախորդին առաքելու նպատակով:

1.3 Ընկերությանը հանձնվելու պահից Թերթերի նկատմամբ սեփականության իրավունքը փոխանցվում է Հաճախորդին՝ անկախ դրանց փաստացի հանձնման հանգամանքից:

1.4 Ընկերության մեղքով Թերթերի կորստի կամ վնասվածքի դեպքում հաճախորդի կրած վնասները հատուցվում են Ընկերության կողմից և այդ վնասների չափը չի կարող գերազանցել կորած կամ վնասված թերթերի գինը:

1.5 Կողմերը համաձայնության են գալիս առ այն, որ Ընկերությունը որևէ լրացուցիչ ծառայության վճար չի գանձի Հաճախորդից բացառությամբ Թերթերի արժեքը, որն ամբողջությամբ փոխանցելու է Թերթերը թողարկողներին (վաճառողներին)՝ վերջիններիս հետ ընկերության կնքված պայմանագրերին համապատասխան:

1.6 Կողմերն արձանագրում են, որ սույն պայմանագրով նախատեսված բաժանորդագրության ծառայությունները Ընկերության կողմից մատուցվում են Թերթերը Թողարկողների (վաճառողների) հետ կնքված պայմանագրերով սահմանված ընկերության պարտավորությունների շրջանակներում և Ընկերությունը մատուցվող ծառայությունների դիմաց հատուցումը ստանում է Թողարկողներից (վաճառողներից):

2. Ծառայությունների մատուցման պայմանները

2.1 Սույն պայմանագրով սահմանված բաժանորդագրության ծառայություններից օգտվելու նպատակով Հաճախորդը լրացնում է դիմում, որտեղնշում է հետևյալ տեղեկատվությունը.

2.1.1 Բաժանորդագրության ծառայություններից օգտվելու Հաճախորդի առաջարկը.

2.1.2 Բաժանորդագրվող Թերթերի անվանացանկը համաձայն Ընկերության 2018թ-ի և «Ռոսպեչատ» գործակալության 2018 թ. I կիսամյակի բաժանորդագրության կատալոգում ներկայացված անվանացանկի.

2.1.3 Նշում է կատարում այն մասին, որ բաժանորդագրված Թերթերը Ընկերության փոստատարի կողմից Հաճախորդին պետք է հանձնվեն՝
ա) Հաճախորդի փոստային բաժանորդային պահարանում տեղադրելու միջոցով,
բ) Փոստային կապի օբյեկտում (փոստային բաժանմունքում) գտնվող և Հաճախորդի կողմիցօգտագործվող փոստային անվանական պահարանում տեղադրելու միջոցով, կամ
գ) Հաճախորդին առձեռն նրա բնակության կամ գտնվելու վայրի հասցեում հանձնելու միջոցով:

2.1.4 Եթե բաժանորդագրված Թերթերը Հաճախորդին հանձնվելու են նրա բնակության կամ գտնվելու վայրի հասցեում կամ տեղադրվելու են Հաճախորդի փոստային բաժանորդային պահարանում, ապա Հաճախորդը նշում է իր բնակության/գտնվելու վայրի ճշգրիտ հասցեն և փոստային դասիչը.

2.1.5 Եթե բաժանորդագրված Թերթերը Հաճախորդին հանձնվելու են վերջինիս կողմից օգտագործվող փոստային անվանական պահարանում տեղադրելու միջոցով, ապա հաճախորդը ճշգրիտ նշում է այն փոստային անվանական պահարանի համարը և դրա գտնվելու վայրը (փոստային բաժանմունքի դասիչը), որում պետք է տեղադրվեն բաժանորդագրված Թերթերը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում Բաժանորդագրության պայմանագրի և փոստային անվանական պահարանի տրամադրման և սպասարկման պայմանագրի ժամկետները պետք է լինեն նույնը.

2.1.6 Հաճախորդը լրացնում է դիմումին կից անվանացանկի թերթիկը համաձայն ներկայացված աղյուսակի, լրացնում է դիմումի ձևաթղթում նշված այլ տեղեկատվությունը և ներկայացնում է սույն պայմանագրի կնքման համար անհրաժեշտ և դիմումի ձևաթղթում նշված փաստաթղթերը:

2.2 Սույն պայմանագրի 2.1.3. կետի «գ» ենթակետով սահմանված Հաճախորդին առձեռն հանձնելու գործընթացը համարվում է իրականացված, եթե Ընկերության փոստատարի կողմից բաժանորդագրված թերթերը և/կամ ամսագրերը հանձնվել են անձամբ ֆիզիկական անձ Հաճախորդին կամ Հաճախորդի հետ համատեղ (նույն

հասցեում) բնակվող անձանցից որևէ մեկին կամ հանձվեն իրավաբանական անձ կամ անհատ ձեռնարկատեր հանդիսացող Հաճախորդի համապատասխան աշխատակցին կամ ստորաբաժանմանը (կազմակերպության բարտուղարություն, ընդհանուր բաժին, կազմակերպության մուտքի մոտ գտնվող անվտանգության աշխատակից և այլն).

2.3 Հաճախորդը լրացված դիմումը ստորագրում և ներկայացնում է Ընկերության համապատասխան իրավասու աշխատակցին և ստորագրում է իրավասու աշխատակցի կողմից տրամադրված բաժանորդագրության պայմանագիրը:

2.4 Հաճախորդի կողմից լրացված դիմումը հանդիսանում է սույն պայմանագրի անբաժանելի մասը:

2.5 Ընկերությունը պարտավորվում է Հաճախորդի կողմից բաժանորդագրված Թերթերը Հաճախորդին հանձնել դրանց՝ Ընկերության կողմից ստացման աշխատանքային օրվա ընթացքում:

2.6 Ընկերությունը պատասխանատվություն չի կրում Բաժանորդագրված Թերթերի՝ Հաճախորդին չհանձնման այնպիսի դեպքերի համար, որոնց տեղի ունենալու համար պատճառ են հանդիսացել հետևյալ հանգամանքները.

2.6.1 Հասցեական առաքման դեպքում Հաճախորդի նշած հասցեում առաքման ժամկետին դուռը փակ է եղել.

2.6.2 Տեղի է ունեցել Ընկերության արտադրաշահագործական գործընթացի խափանում, որի արդյունքում բաժանորդագրված առաքանիները հնարավոր չէր ժամանակին հանձնել Հաճախորդին: Ընդ որում, նման դեպքերում Ընկերությունը բաժանորդագրված առաքանիները հաճախորդին է հանձնում սահմանված ժամկետի ուշացումով, Հաճախորդին հայտնելով տեղի ունեցած արտադրաշահագործական գործընթացի խափանման մասին.

2.6.3 Տեղի է ունեցել ֆորս մաժորային իրադարձություն, որի պատճառով ընկերությունը հնարավորություն չի ունեցել կատարել սույն պայմանագրով սահմանված իր պարտավորությունները.

2.6.4 Սահմանված վայրից բացակայել է փոստային բաժանորդային պահարանը կամ նշված պահարանը գտնվել է այնպիսի վիճակում, որ բաժանորդագրված առաքանու տեղադրումը տվյալ պահարանում Ընկերության փոստատարի գնահատմամբ կհանգեցներ առաքանու կորստի կամ վնասվածքի: Ընդ որում, սույն ենթակետով սահմանված դեպքերում Ընկերության փոստատարը Բաժանորդագրված առաքանին հանձնում է Հաճախորդին առձեռն նրա բնակության/գտնվելու վայրի հասցեում, իսկ դրա անհնարինության դեպքում Ընկերությունը ծանուցում է Հաճախորդին առաջարկելով փոփոխել սույն պայմանագրի պայմանները (լրացնել նոր դիմում նշելով հասցեական առաքման եղանակը) կամ պատշաճ վիճակի բերել փոստային բաժանորդային պահարանը:

2.7 Ընկերությունը Բաժանորդագրված առաքանիների չհանձնման կամ ուշացումով հանձնման համար պատասխանատվությունը չի կրում նաև այն դեպքերում, երբ նման ուշացումները կամ չհանձնման դեպքերը տեղի են ունեցել Բաժանորդագրված առաքանին թողարկող կամ վաճառող ընկերության մեղքով: Մասնավորապես, թերթերի և/կամ ամսագրերի համապատասխան համարը չի թողարկվել, թողարկվել է ուշացումով կամ Թողարկողի կողմից ընկերությանը հանձնվել են սահմանված ժամկետի ուշացումով կամ ոչ լրիվ քանակով կամ Թողարկողի կողմից թույլ տրված այլ խախտումներով: Ընկերությունը Հաճախորդին տեղեկացնում է սույն կետով սահմանված փաստերի մասին գրավոր (փոստի կամ էլեկտրոնային փոստի միջոցով) կամ բանավոր՝ հեռախոսազանգի կամ փոստատարի այցելության միջոցով:

2.8 Հաճախորդը իրավունք ունի սույն պայմանագրի գործողության ընթացքում ավելացնել առաքվող Թերթերի տեսակները, որի դեպքում նոր հայկական թերթերի և/կամ ամսագրերի համար Հաճախորդը լրացնում և ընկերությանն է ներկայացնում սույն պայմանագրի հավելված 1-ով սահմանված նոր ցանկը յուրաքանչյուր ամսվա համար մինչև նախորդ ամսվա 25-ը, իսկ արտատահմանյան պարբերականների դեպքում՝ յուրաքանչյուր ամսվա համար մինչև նախորդ ամսվա 15-ը:

3. Կողմերի իրավունքներն ու պարտականությունները

3.1 Ընկերությունը պարտավոր է՝

3.1.1. Ծառայությունը մատուցել պատշաճ որակով, սույն պայմանագրի պայմաններին համապատասխան.

3.1.2. Ծառայությունը մատուցել ամբողջ ծավալով, սույն պայմանագրով սահմանված ժամկետի ընթացքում

3.1.3. Կատարել սույն պայմանագրով սահմանված իր այլ պարտավորությունները:

3.2 Ընկերությունն իրավունք ունի՝

3.2.1Պահանջել Հաճախորդից՝ սույն պայմանագրով նրա կողմից ստանձնված վճարման և այլ պարտավորությունների պատշաճ կատարում.
3.2.2 Իրացկանացնել սույն պայմանագրով սահմանված իր այլ իրավունքները:

3.3 Հաճախորդը պարտավոր է՝

3.3.1 Սույն պայմանագրով սահմանված կարգով և ժամկետներում վճարել Ծառայությունների մատուցման համար.

3.3.2 Ընկերության կողմից մատուցվող ծառայությունների որակի կամ այլ պայմանների վերաբերյալ բողոքներ ունենալու դեպքերում անհապաղ տեղեկացնել դրանց մասին Ընկերությանը՝ պահպանելով սույն պայմանագրի ենթակետով սահմանված պայմանները.

3.3.3 Որևէ սխալ կամ ոչ հավաստի (չճշտված) տեղեկություն չտարածել (հրապարակային կամ ոչ հրապարակային եղանակով) Ընկերության և Ընկերության կողմից մատուցվող ծառայությունների որակի և այլ պայմանների վերաբերյալ.

3.3.4 Կատարել սույն պայմանագրով սահմանված իր այլ պարտավորությունները:

3.4 Հաճախորդն իրավունք ունի՝

3.4.1 Պահանջել Ընկերությունից Ծառայությունները մատուցել ժամանակին և պատշաճ կարգով՝ սույն պայմանագրի պայմաններին համապատասխան.

3.4.2 Տեղեկատվություն ստանալ մատուցված ծառայությունների պայմանների կամ ծառայությունների մատուցման ընթացքի վերաբերյալ.

3.4.3 Ծառայությունների մատուցման պայմանների և սպասարկման որակի վերաբերյալ դժգոհություններ կամ բողոքներ ունենալու դեպքում գրավոր՝ փոստի կամ էլեկտրոնային փոստի միջոցով, ինչպես նաև սույն պայմանագրում նշված հեռախոսահամարով Ընկերությանը հայտնել իր բողոքն ու դժգոհությունը՝ Ընկերությունից պահանջելով սահմանված ժամկետներում և կարգով լուծում տալ առաջադրված խնդիրներին.

3.4.4 Իրացնել սույն պայմանագրով սահմանված իր այլ իրավունքները:

4. Ծառայության դիմաց վճարման չափը, կարգը և այլ պայմանները

4.1 Սույն պայմանագրով սահմանված Ծառայության դիմաց Հաճախորդը Ընկերությանը վճարում է բաժանորդագրված պարբերականների ընդհանուր գումարը՝ համաձայն Բաժանորդագրության կատալոգով սահմանված սակագների:

4.2 Վճարումը կատարվում է կանխավճարի ձևով Ընկերության կողմից ներկայացված հաշիվ ապրանքագրի հիման վրա:

4.3 Յուրաքանչյուր այնպիսի դեպքերում, երբ Հաճախորդը սույն պայմանագրի 2.8 կետով սահմանված կարգով ավելացնում է պատվիրված թերթերի և/կամ ամսագրերի քանակը՝ համապատասխան փոփոխությունը կատարվելուց հետո Ընկերությունը ներկայացնում է հաշիվ ապրանքագիր, որի համաձայն վճարումը կատարվելուց հետո փոփոխությունը մտնում է ուժի մեջ:

4.4 Սույն պայմանագրի վաղաժամկետ լուծման դեպքերում Ընկերությունը կատարում է վերահաշվարկ և Հաճախորդին հետ է վերադարձնում Պայմանագրի լուծման օրվանից մինչև Պայմանագրով սահմանված ժամկետի ավարտն ընկած ժամանակահատվածի համար Հաճախորդի վճարված կանխավճարը:

5. Կողմերի պատասխանատվությունը

5.1 Պայմանագրային պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար կողմերը պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ և այլ իրավական ակտերով սահմանված կարգով:
5.2 Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու դեպքում կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի հանգամանքների ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել:

6. Վեճերի լուծման կարգը

6.1 Սույն պայմանագրի կապակցությամբ կողմերի միջև ծագած վեճերն ու տարաձայնությունները լուծվում են բանակցությունների միջոցով, իսկ համաձայնություն ձեռք չբերելու դեպքում՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

7. Եզրափակիչ դրույթներ

7.1 Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում և կողմերի համար պարտադիր է դառնում Պայմանագրի հիման վրա Հաճախորդի կողմից Ծառայության դիմաց սույն պայմանագրով սահմանված կարգով և չափով վճարումները կատարելու պահից և գործում է մինչև՝ 31.12.2018թ.:

7.2 Սույն պայմանագրում պարզաբանումներ, փոփոխություններ և լրացումներ կատարվում են կողմերի փոխադարձ համաձայնությամբ և օրենսդրությամբ սահմանված կարգով լրացուցիչ համաձայնագրեր կնքելու միջոցով, որոնք կհանդիսանան սույն պայմանագրի անբաժանելի մաս:

7.3 Սույն պայմանագիրը կարող է լուծվել Թերթերի բաղարկումը դադարեցվելու և/կամ, բաղարկողի կամ վաճառողի հետ կնքված պայմանագրի լուծման դեպքերում՝ Թերթերի հետագա առաքման անհնարինության պատճառով:

7.4 Սույն պայմանագրով կատարված բոլոր գրավոր ծանուցումներն ընդունելի են Կողմերի կողմից, եթե դրանք կատարվել են սույն պայմանագրի 8-րդ կետով սահմանված իրավաբանական հասցեներով կամ էլեկտրոնային եղանակով՝ հետևյալ էլեկտրոնային փոստի հասցեներով՝

Ընկերություն՝ subscription@haypost.am

Հաճախորդ՝ .....@.....

7.5 Սույն պայմանագրի 8-րդ կետում նշված վավերապայմաններում և սույն Պայմանագրի կնքման համար Հաճախորդի ներկայացրած դիմումում և դրան կից փաստաթղթերում փոփոխություններ կատարվելու դեպքերում Կողմերը ծանուցում են միմյանց այդ մասին համապատասխան փոփոխությունը կատարվելուց հետո եռօրյա ժամկետում կամ անհապաղ, եթե փոփոխությունը վերաբերում է բանկային վավերապայմաններին, Հաճախորդի հասցեին, էլեկտրոնային փոստի հասցեներին:

7.6 Սույն պայմանագիրը կազմված է հավասարազոր իրավաբանական ուժ ունեցող չորս օրինակից /երեք օրինակը տրվում է Ընկերությանը, մյուսը՝ Հաճախորդին/:

8 Կողմերի իրավաբանական հասցեները, բանկային տվյալները և կողմերի ստորագրությունները

«Ընկերություն»	«Հաճախորդ»
«Հայփոստ» ՓԲԸ	«Գյումրու «Ընտանիք» ՄՊՍԿ» ՊՈԱԿ
ք.Երևան, Սարյան 22	Շիրակի մարզ, ք.Գյումրի
ՀՀ / 1930003703150900	ՀՀ 1510036776310100
«Կոնվերսբանկ» ՓԲԸ	Բանկ «Արարատ բանկ» ԲԲԸ Գյումրի-2 մ/ճ
ՀՎՀՀ: 02507464	ՀՎՀՀ: 00504412
հեռ.: 010/514-512	հեռ.: 093-61-27-12
Տնօրեն	Տնօրեն
Ա.Գրիգորյան	Ա.Մինասյան
Կ.Տ	Կ.Տ

Կատ. Ա.Մաթոսյան
Հեռ. 095-98-37-44

«Հայփոստ» ՓԲԸ

«Հայփոստ Հյուսիս » մասնաճյուղի տնօրեն

պարոն Ք.Նիկողոսյանին

ԴԻՄՈՒՄ

Հարգելի պարոն Ք.Նիկողոսյան

Խնդրում եմ «Գյումրու «Ընտանիք» ՄՊՍԿ» ՊՈԱԿ-ի հետ կնքել Բաժանորդագրության պայմանագիր՝ համաձայն սույն դիմումի և պայմանագրի անբաժանելի մասը հանդիսացող կից ներկայացվող անվանացուցակի:

Կից ներկայացնում եմ՝

- ✓ պետական գրանցման վկայականի պատճեն /ղեկավարի ներդիրով/
- ✓ եթե պայմանագիր ստորագրող անձը լիազորված անձ է, ապա՝ լիազորագիր*
- ✓ պայմանագիրը կնքող անձի /ղեկավար կամ լիազորված անձ/ անձնագրի պատճեն

Խնդրում եմ բաժանորդագրված թերթերը առաքել

1	«3126 » Փոստային դասիչ՝ 3126 , Հասցե՝ ք.Գյումրի.	V
2	Բաժանորդագրված առաքանին տեղադրել հասցեում_____ գտնվող թիվ_____ փոստային բաժանորդային պահարանում	
3	Բաժանորդագրված առաքանին տեղադրել «Հայփոստ» ՓԲԸ թիվ_____փոստային բաժանմունքում տեղադրված թիվ _____փոստային անվանական պահարանում:	

Հավաստում եմ, որ կից ներկայացված փաստաթղթերը օրինական են և ներկայացված պատճենները կատարվել են գործող փաստաթղթերի բնօրինակներից:

Հավելված 1

Բաժանորդագրության ցանկ

Դասիչ	Թերթեր/ամսագրեր	հատ	պարբերականի բաժանորդագրության ժամանակահատվածը / ամիս	Թերթի/ամսագրի բաժանորդագրման արժեք, ՀՀ դրամ	Ընդհանուր գումար, ՀՀ դրամ
150	«Կրթություն»	1	11 ամիս	900	9900

«Գյումրու «Ընտանիք» ՄՊՍԿ» ՊՈԱԿ
/կազմակերպության անվանում/

Շիրակի մարզ, ք.Գյումրի Անի թաղ., 11փող.,5/2
Հասցե՝

«Արարատ բանկ» ԲԲԸ Գյումրի-2 մասնաճյուղ
Սպասարկող բանկ՝

h/h1510036776310100
Բանկային հաշվի համար՝

05504412
ՀԿՀՀ/

0312-6-64-07
093-61-27-12
Հեռախոսահամար՝/Tel number

Տնօրեն
Պայմանագիրը կնքող անձի պաշտոնը/

Ա.Մինասյան

Պայմանագիրը կնքող անձի Անուն / Ազգանուն/

ստորագրություն

15.01.2018թ

[1] Դուրս գրման ամսաթիվ			Հաշիվ ապրանքագիր (ծառայությունների մատուցման, աշխատանքների կատարման)	[2] Սերիա	[3] Համար
19	Փետրվար	2018 թ.		Բ	6216894075
[4] Մատուցման ամսաթիվը					
19	Փետրվար	2018 թ.		Ճշգրտվող հաշիվ ապրանքագրի	
				Սերիա	Համար
				Ճշգրտվող հաշիվ ապրանքագրի դուրս գրման ամսաթիվ	

Պայմանագիր	[5] Կնքման ամսաթիվ	[6] Համար
		SB-N-135-01-18; PM-01-11-17

[7] Լրացուցիչ տվյալներ (պայմաններ)

բաժանորդագրություն 2018 թ.

Ծառայություններ մատուցող (աշխատանքներ կատարող) անձի

[8] Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ)	0	2	5	0	7	4	6	4

[9] Անվանումը	ՀԱՅՓՈՍՏ Փակ բաժնետիրական ընկերություն (ՓԲԸ)	
[10] Բանկային տվյալները	Կոնվերս բանկ	N 1930003703150900
[11] Գտնվելու վայրը (հասցեն)	ԵՐԵՎԱՆ ԿԵՆՏՐՈՆ ԿԵՆՏՐՈՆ ԹԱՂԱՄԱՍ Սարյան փող 22	
[12] Լրացուցիչ տվյալներ		

Ծառայություններ (աշխատանքներ) ստացող անձի

[13] Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ) (ֆիզիկական անձի անձնագրի սերիան և համարը)	0	5	5	0	4	4	1	2

[14] Անվանումը	ՀՀ ԿԳՆ <ԸՆՏԱՆԻՔ> ՄԱՆԿԱՊԱՏԱՆԵԿԱՆ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ Պետական ոչ առևտրային կազմակերպություն (ՊՈԱԿ)		
[15] Բանկային տվյալները	Արարատ Բանկ ԲԲԸ	N 1510036776310100	
[16] Գտնվելու վայրը (բնակության վայրը)	ԳՅՈՒՄՐԻ ԱՆԻ ԹՂՄ. 11 Փ. 5 2		
[17] Լրացուցիչ տվյալներ			
[18] Ում միջոցով	Անուն, ազգանուն		
	Լիազորագիր	Համար	
		Ամսաթիվ	

[19] Ծառայությունների մատուցման (աշխատանքների կատարման) ծավալի և վճարման ենթակա գումարի հաշվարկը

NN Հ/Գ	Ծառայությունների (աշխատանքների) անվանումը (բովանդակությունը)	Չափի միավորը	Ընդհանուր ծավալը կամ ժամանակաշրջանը	Միավորի գինը	Արժեքը
1	2	3	4	5	6
1	Բաժանորդագրություն 2018 թ, Կրթություն 11 ամիս	հատ	1	9900	9900
Ընդամենը					9900

Ծառայություն մատուցող (աշխատանք կատարող)՝ KHACHATRYAN ANAHIT 6202840129

(ստորագրությունը, անունը, ազգանունը)

Ծառայություն (աշխատանք) ստացող՝ MINASYAN ARTUR 2505620598

(ստորագրությունը, անունը, ազգանունը)

19/02/2018 17:08:46

22/02/2018 13:21:07